

ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար	12 փր.
սարկիան	6 "
վեցամսեայ	6 "
Արտասահմանի համար	15 "
սարկիան	8 "
վեցամսեայ	8 "
Անկերիկայի համար	3 սյր.
սարկիան	3 սյր.
վեցամսեայ	1 50 "

Մանուցման տողը սուս թիւ երեսին համար 40 ս. թիւ վերջին երեսին համար 20 սակերիւ կ. երեսին աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլայ:

Վառնայի համար ձեռքի 10 սակերիւ

ՇՈՒԱԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԿՇՈՒԹԻ ԵՒ ՇՈՒԱԿ ՕՐԵՐԸ

«ՇՈՒԱԿ» Ի ՔԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՐՈՒՆԳՐԸ ԲԱՃԵՆԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Նամակ եւ դրամ դրկեյ խմբագրութեան հասցիին

Редакция на вѣстникъ „Шаржунъ“ Варна

Redaction du journal „Charoun“ Yarna (Bulgarie)

Պուշկարիոյ համար ձեռքի 15 ՍԱԼԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքի 20 ՍԱԼԹԻՄ

Գրութիւնք եւ չեկ տրուի

ՌՈՒՍԱՑ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐԻ Խ ՈՍՏՈՒՄ ԵՆ ԵՐԸ

Ռուսաց ներքին գործերի նոր նշանակութեամբ մինիստր՝ Սվետոպոլկով-Միրսկու ճառերը ահագին իրարանցում առաջացրին բովանդակ Ռուսաստանի հասարակական եւ մանաւանդ, այո՛, եւ մանաւանդ մամուլի ղեկներում: Տիրուղ ոգեւորութիւնը, թէեւ միայն առերեսով, անկարգութիւն է: «Նոր հոսանքներ են սկսում», «Նոր հոլմեր են փչում», «Նոր զարգացում է սկսում Ռուսաստանի համար», եւ այլն այսպիսի գեղեցիկ խօսքեր կարելի է կորցալ բաղդիքներով ամենօրեայ լիցիւմում: Ամենայնորակա՞ լրագիրն սնգամ ողբւնում է Ռուսաստանի բարեշրջումը: Այդ այդ նախանշանները, կարգաւ լրագիրներին այդ ոգեւորութեամբ յղուածները եւ մի րոպէ աչք փակելով իրականութեան առաջ, մարդու մտքով անցնում է՝ «ահա այն ազատ Ռուսաստանը, որ փափաքում են տեսնել Ռուսաստանի լուսագոյն մտածողները, վերջապէս միապետական բռնապետութիւնը տեղի տուց մարտնչող յեղափոխական գաղափարի առաջ, ահա վերջապէս ազատ Ռուսաստան, ուր կարելի է ապրել, առանց զրկելու մարդկային տարրական իրաւունքներից: Բայց դա ցընորք է ռուսաստանցու համար եւ զուգէ երկար ժամանակ ցնորք էլ կը մնայ: Ռուսաստանում բարենորոգումների ստուերն անգամ տեսնել մարդ գո՞ւարանում է հաւատալ: Բայց նոր մինիստրի ճառերի մէջ ինչն էր, որ այդ աստիճան ոգեւորութիւն առաջացրեց, այդպիսի անհայտն զորքոց հանց՝ որ այժմեանից իսկ պատմական խոշոր ակտ է համարում: ահա այստեղ է հետաքրքրել:

Նոր-նոր հաստատութիւններ աւելի ընդարձակ տարածութիւնների վրայ, վստահութիւն դէպքի զէմստվոները եւ հասարակական օրգանները, կրօնի համբերատարութիւն, անխտիր վերաբերմունք դէպքի բոլոր ազգութիւնները: Ազգերի եւ կրօնի խտրութեան հարցն ինչպէ՞ս պէտք է հասկանալ. շատ վաղուց, նոյն իսկ օրէնքով է վերացուած ազգերի եւ կրօնի խտրութիւնը. բայց ո՞ր է այդ օրէնքի գործադրութիւնը: Նոր մինիստրի հասկացողութեամբ Ռուսաստանում ազգերի եւ կրօնի խտրութիւն չի կարող լինել, որովհետեւ այնտեղ բոլորն էլ ռուս են: Ահա ինչ է ասել նա մի եւրոպական ինքնիշխան թղթակցի «ինձ համար չկայ մեր հայրենիքում ոչ օտարացեղ, ոչ օտարազան, ամենքն ինձ համար ռուս են: Թէ որքան նրանք ամէնքն էլ Ռուսաստանի բարի զաւակներն են. —ցոյց տուց պատերազմը, Լուստերականները, հրէաները, մահմետականները, բոլորն էլ գնում են այնտեղ իրենց կեանքը զոհելու հայրենիքի համար, Հա՞րկ կայ արդեօք խօսելու զեռ եւս հրէաների եւ հայերի մասին: Դէպքի դրանց ամէնքն էլ պէտք է վերաբերուին արդարութեամբ, չէ՞ որ դրանք ամէնքն էլ ռուս են: Ահա ձեզ լոգրկա, Ահա սա է, զեռեւս խօսքերով, կրօնական համբերատարութիւնն ու անխտիր վերաբերմունքը. ինչ սպասե՞ք տեսնելու իրականութեան մէջ:

Ինչ է խոստացուած մամուլի ազատութիւնը. մինիստրն այդ անթիւ ասում է. «Այդ ասպարիզում (այսինքն մամուլի) իրաւի անհրաժեշտ են փոփոխութիւններ: Ի հարկ է այդ փոփոխութիւնները չպէտք է հասկանալ մամուլին անսահման ազատութիւն տալու իմաստով: Այդ անկարելի է: Ազատութիւն անկարելի է տալ. միայն հարկաւոր են փոփոխութիւններ, իսկ սատանան գիտէ ի՞նչ ինչ կը լինին այդ փոփոխութիւնները:

Ինչ՞ ժողովուրդ, որքան կարող ստիպում է սպասում դու ազատութեան, որքան ժամանակ պակակուած քիմքով կապուած ես մնացել զովարար ազգերի կողքին, որ այդպիսի չնչին, խաբուսիկ խոստումները քեզ թեւեր են տալիս, երկինք են բարձրացնում: Դու հասկանում ես, որ խաբուսիկ են այդ յոյսերը, բայց պէտք է կեղծես, առերեսով ոգեւորուես, փառաբանես, որպէս զի հասկացնես բռնակալութեանը, որ այո՛, մեր ամբողջ էութեամբ ազատութեան ենք սպասում: Դիտես եւ այն

որ ոգեւորուած ցոյցերին մի կարճ ժամանակաշրջան է տրուած, որ զբռնից յետոյ էլի կսկսուի սովորական տրտունջներով լի, տաղտկալի կեանքը. գիտես, այո՛, բայց ապագայ անաշխատութեան ծրագիրներ ես մշակում, ազատ կեանքի գեղեցիկ հեռանկարով ես հրճուում, Գիտես, այո՛, որ առաջիկայի մի միջոց ջարացած պէտք է մնայ եւ մինիստրի արտասանած այդ խօսքերը, թէ «Ռուսաստանը չի կարող կանգնած մնալ մի տեղ, նա պէտք է առաջ գնայ», կը մնան լոկ մի ծաղր Ռուսաստանի առնուան, բայց էլի ազատութեան, առաջիկայի մասին ես խօսում... Այնու ամենայնիւ սպասե՞ք տեսնելու. թէ ինչ կը տան այդ խոստումներն իրականութեան մէջ, 12 հոկտ. Փայաք Թիֆլիս

ՌՈՒՐ ԽՄ ՍՈՒԱԿ

Թո՛րի իմ սոխակ, Թո՛րի դու առաջ, Անցիւր սար ու ձոր. գիւղեր աւերակ, Թո՛րի երկիրը ողբ-հառաչանքի, Դի՛տէ վայրերը մուսլ-տանջանքի:

Թառ՛ր իմ սոխակ խրճիթներու քով, Յո՛յս կեանք ներշնչէ թու անուշ երգով, Յնցէ՛, փոթ՛նո՛րկէ յոյզերով ուժգին, Արթնցուր անոնց մեղկ, Թմրած հոգին:

Գուցէ դու լսես միայն հեծեծանք, Վշտահար հոգու սխուր աղբրանք:

Օ՛հ, երգէ՛ սոխակ Երգէ՛ անուշակ Է՛րբբեւ արձագանգ աղեկէզ կոչին Է՛վրէժո՛ դեյալէ անոնց ականջին... Հրանէս Բարիզ

ՆԱՄԱԿ ԽՄ ՏՐԱԿՐՈՒԹԵԱՆ

(Շար. նախորդ թիւէն եւ վերջ)

Այս այսպէս —տղայք կը դիմեն կաթողիկոսին, էլիմասեան Մանուկ-Մոզեան հրէշային երրորդութիւնը՝ ազմուկներու առաջնու վայրկեան մը դուրսով, կը պատրաստեն էզնաբանը,

տղոց զրկել, Պոլիս, Փրկիչը, խենթերու և յիմարներու դպրոցը, ըմբոս և անառակ տղոց դպրոցը, որպէս զի ատով իրենց վրէժը լուծեն փոքրերէն և անոնց մէջ խեղդեն ամէն ազգայնական ձգտում: Ասդին Պ Բասմաշեանը իրեն ձեռքը կ'անցունէ շատ կարեւոր վկայախոսութեան, որոնցմէ կարելի է յիշել Մանուկի գրած քարթը՝ Բասմաշեանը կաշառելու մտքով, որ Բասմաշեանը ներկայացուց ինձի երեք անձերու առջեւ և խոհարարներէն մէկուն նամակը, որուն թարգմանութեան կընդօրինակեմ կտոր մը, որ կը պատկանի էլիմասեանին և որ հետեւեալն է.

«Ահաւասիկ բոլոր մանրամասնութիւնները Գարեթիկին (էլիմասեանի հաշարումէկ անուններէն մէկը). —աշխարհիս վրայ այսպիսի կեղտոտ և մուրացիկ մէկը տեսնուած չէ, իր բոլոր ժամանակը կ'անցնէ քնելով: Այն տեսակ կեղտոտ օձիք մը ռուի սրմէ ապուր մը կարելի է պատրաստել. ճերմակեղէնները չի փոխեր... Կը ճաշէ վայրենի մը նման. ո՛հ, ի՞նչ կեղտոտ ուսուցիչ է նա, և զոյ ուստախօս միայն դասան — երբ մտնէ կ'երթայ բան մը գնելու կիս շիփրա՞մ մեկ շիփրա՞ն տեղ կը հաշուէ ու կը գրէ, ամենագէշ տեսակէն ուսուցիչը կը բերէ սուղ հաշուելով. գարշելի պանիր, հոտած հակիթներ՝ իշու միս... զոր կարելի չէ ուսել, Դրամը կը ծախէ ռոման գնելով կ'ա՞ծ թասրոն երթում... օձի նման... է... Պ. Էզնաբանին պէտք էր Երթալ տեսնել այս աղբոր: Գարեթիկին տեսնակը... այն տեսնակը որ շան խուցէն կեղտոտ է... եւս. եւս:»

Մինչ խնդիրը այս պայմաններու մէջ, մինչ էզնաբանի պատրիարքի հետ կը բանակցի և Ղուբուբեանցը կըսկսի Բարիզի հայ գաղութը ոտքի կանգնեցնել Պ. Էզնաբանի ու իր ըստարակարգեալներու դէմ հոկտեմբեր 21-ին, կիրակի օր. երբ որբերը եւ կեղեցի կ'ըլլան և իրենց մէկը, Արամ Բասմաշեան, հիւանդ իրեն նընջարանը, առջի օր փոքրերուն և տղախոնի մէջ ծագած փոքր վէճ մը, էլիմասեանէն լսած և գայրացած Մոզեան ըսուած հրէշը (վառմապուհ քահանայի խօսքով) տղոց նշարանը կեղտոտ կեղեցիներն եւս յայն հաւաքել և գառնալով Արամին կըսէ. «չուտով դուք առ փրթիներդ ու դուրս ել ասկէ. միւսներն ալ գան անոնք ալ դուրս գիտի ընեմ: Պ. Արամը կ'ընդիմանայ. առարկելով թէ ատանկ բան մը միայն էզնաբանը կրնար իրենց բսել և թէ Պ. Էզնաբանը, բարերար, այդ

միտքը... Կրնար անհնայ քանի որ գիրենք Փրկիչ ողորկել որոշած էր. Պ. Մոզեան բորբոքած խեղճ տղուն վրայ կը յարձակի և երեզին կը պոսայ սրիկայ, լիբր. ամէն օր քեզի գէժ կը բողբոնի կրայց ո՞վ, աղբոր դունայանուհին... թէ աղբոր աղախիչը... Էջնանանի աշքը (ոյս...) ես քեզ գուրս գնա կրսեմ, էջնանանը չէ նսկողը ձեր, 'ես եմ' տղան չկրնալով գիրմանալ այս լիբր վարմունքին, կը պատասխանէ Մոզեանին ըսելով «լիբր և սրիկան դուն ես»: Այսպէս կ'ըսէր երկու անգոր ու ժերու կռիւը և երկու վայրկեանէն որքը կ'ընայ ու ժաթափ, քիթ ու բերանը արևնուտած, գուրսէն կը վազեն Փրանսացի կրնեթը և լիբր Մոզեանին մայրը տղուն վրայ յուր լեցնելու և քացախով շրփելով ուշքի բերելու, բայց Մոզեանը վայրկեան մը կ'ուզէ գանոնք արգելել ունալով «թող տուէք թող սատկի...»: Միւս որբերը եկեղեցիէն վերադարձին իրենց ընկերը անկողինը կը գտնան, ա' չկրնալով համբերել չուտով Փարիզ կ'ընան և երեք նամակներ (բողոքագրեր) կը ներկայանան Պ. Պ. Չօպանեանին Բասմալեանին և Ղուսթրեանցիին: Արևակ Պ. Բասմալեանը իր տանը կը գրտնուր ուրիշ երեք պարտններու հետ, որոնք անմիջապէս Նօյի կերթան և խնդիրը կը յանձնեն ոստիկանութեան, յետոյ Պ. Բասմալեան վերադարձած որբի հետ էջնանանի տունը կերթայ խնդիրով որ Արամ բժշկի ներկայացուի և ռապիտ մը առնուի: Էջնանանը կը մերժէ և աւելին կայ, որովհետեւ Նօյի քաղաքի ստիկանայեալ իրատունը կը քննի, անոր հետ բարեկամական կ'ապրի Լաստասելով կը փորձէ (և կը կարծէ յաջողած ըլլալ անաչառ և անկաչառ Ֆրանսայի մէջ) խնդիրը խեղդել և զեռ (մի' զարմանաք) Բասմալեանին ամբաստանեալ:

Ուշատան խնդրոյն կը տեղեկանանան Պ. Պ. Չօպանեանն և Ղուսթրեանցը:

Անա մէկ քանի կտոր ծեծուող որբի նամակէն Պ. Ղուսթրեանցին գրտուած (նամակը «ամբողջութեամբ ներփակ կը գանաք, դժած եմ այն տողերը որ ըստիս, կարելի էր սպել եթէ հարկ գատէիք»):

Այդ իրիկուն իսկ խուճ մը փարիզարնակ հայ երիտասարդներ ժողով մը կ'ուսենան և կորոշեն Տէր Ղուսթրեանցի քահանայի օձիքը բռնել, հակնալ անկէ էջնանանի խոստումները և անոր միջոցաւ պահանջել էջնանանին իր խոստումներն կատարել: Թաղորդ օրը, ընտրողութեամբ, հակառակ իրենց մէջ եղած խռովութեան, Պ. Պ. Բասմալեան և Ղուսթրեանց կը ներկայանան Տէր Ղուսթրեանցի քահանային՝ բացատրելով անոր որբերու անտանելի վիճակը և իրեն յիշեցնելով իր այդ խնդրոյն մէջ ունեցած պատասխանաւարութիւնը: Տէր Ղուսթրեանց կը կրնելով էջնանանին խոստումները և զարմար յայտնելով էջնանանին այդ խոստումները չկատարելուն բոլոր յանցանքը կը բարդէ Մոզեան հրէշին վրայ (իր խոստումը) և կը խոստանայ զիմի կ'ընանանին յայտնելով թէ եւ որ առաջին անգամ չէ և հակառակ պարագային ժողովորդի առջևն ինկած կրթալ հոն ուր պէտք է:

Որբերը կը ներկայանան Պ. Չօպանեանին և յիշեցնելով անոր ալ իր այդ խնդրոյն առ թիւ յողուած գրտը, բացատրելով և սպասուցանելով որ իրենց կացութիւնը անտանելի է իր անաչառ խնդիրը արագապէս իրենց հարցը: Պ. Չօպանեանը սիրով կ'ընդունի և կը խոստանայ իր աջակցութիւնը, բայց կը նախընտրէ անգամ մը Պ. էջնանանը տեսնել, կը տեսնայ էջնանանը և էջնանանի հետ կը համարի որբերէն չափահասները Պոսոյ կեդրոնականը զրկելու որոշումն առնել, այդ լուրը կը հաղորդուի որբերուն և Փարիզի հետաքրքրուող հայ գաղութիւն, որոնք սիրով կ'ընդունին, բայց կ'ուզեն իրանցի կամ գրաւոր անգամ մը եւս լսել, որպէս զի խոստումը առաջի խոստումն չըլլանքի և ստոր համար կ'որոշեն Պ. էջնանանի հետ, այնօր՝ ժամը 5-ին, ժամագրութիւն մը:

Ճիշտ ժամուն Տէր Ղուսթրեանց քահանան առանձին և յետոյ Պ. Պ. Չօպանեան Ղուսթրեանց և չորս շափահաս որբերը Պ. էջնանանի գրտանեակը կ'ընթան. Պ. էջնանան չուզեր անոնց առջև իրեն խօսքը կըրկնել և խոյս կուտայ: Պ. էջնանանի ստորակարգեալներն և խնկարկու-

ներն Մանուկն և Միսակ Տէր-Միքայէլեանը կը ներկայանան և կուզեն խնդիրը անուշաթեամբ խեղդել, մինչդեռ Մանուկը Պ. Չօպանեանին չի կրնար բացատրել էջնանանի խոյս տալու պատճառը և կը կակամսի Միսակ Տէր-Միքայէլեանը այսպէս կ'ուզէ ճոռմարանել ու պաշտպանել էջնանան, Մանուկ, Մոզեան, Էջնանան քառագլուխ դիւալին սօսել թէն. «այս խնդիրը այսպէս ըլլալու չէր, էջնանանը որբերու հարն է, ան իրեն ուզածին պէս զանոնը կը կտտաւարէր, մէկ-երկու սրիկաներ եղան այս խնդիր յարուցանողը»: Պ. Չօպանեան կը բողբոնէ, Պ. Ղուսթրեանց կը սպասնայ և Միսակ Տէր-Միքայէլեանը կը յայտնէ թէ խօսքը իրենց չէ որ կուզէր. Պ. Ղուսթրեանց կը պահանջէ որ անուշաթեամբ խոյս տան թէ սրիկայս բոլոր որոնց հասցին կուզուի. Տէր-Միքայէլեան կը պատասխանէ թէ մէկը Բասմալեանին կ'այնորիկէ, հազիւ թէ խօսքը բերեն զորս ինկած Ղուսթրեանցի պատա. կը կ'ընայ էջնանանը խնկարկող և Փարիզի հայ գաղութակաճութեան պատկանող մէկին (որ կը բողբոնէր էջնանանի դէմ և զոր կը ներկայացնէր հոն ինքը) Պ. Ղուսթրեանցը սրիկայ անուշաթեամբ ներսին, Տէր-Միքայէլեանը կուզէ կրկին զինքը բացատրել և կրկնորդ անգամ սրիկայ կանուանէ Տաղաւարեան անուն պարոն մը, Ղուսթրեանի ձեռքէն ազատելու յոյսով, Տէր-Լուսթրեանց քահանայի խնդրանաց վրայ է որ կը խնայուի յետադարեան ամիրայի խնկարկուին քիտն ու բերանը չարիւնտած (թէ եւ երեսը կարմած) զորս սպրդել ամիրա էջնանանին գրտանեակին, Նկատելով Պ. էջնանանի փախուստ տալը Ղուսթրեանց հետեւեալ խորհուրդը կուտայ որբերուն. կըսէ, բոտ իրեն, սղայք պէտք չէ լսեն և հաւատան ո եւ է միջնորդի խօսքին, պէտք է անձնապէս և գրաւոր խոստում ստանան էջնանանին, հակառակ պարագային թող սպասեն որ Փարիզի հայ գաղութը զիմէ ընդհ. փառախօզին ուր էջնանան պիտի ստիպուի իր խոստումը գրաւոր ընել:

Այսպէս մնացած է խնդիրը: Ահա ինչ որ յայտնեց ինձի Ղուսթրեանցը:

«Ես վայրկեան մը կը կարծէի որ էջնանանը բարի հարուստ մըն էր, այնքան բարի որքան կրնայ ըլլալ հարուստ մը, և բոլոր յանցանքը կը բարդէի իրեն ստորակարգեալներու վրայ, բայց կարգ մը բաներ որ այս մէկ-երկու օրերս լսեցի խիստ դատապարտելի կը կացուցանեն էջնանանը, ձիւս երկու մտքով կը պահէ որբերը. Ա. — Շահագործել անոնց աշխատութիւնը. Բ. — Շահագործել անոնց բարերար դաճանալու իր անուշը: — Ինձի ըսին, և ըսողը էջնանանի գործերուն ծանօթ մէկն էր, թէ այդ տղոց իւրաքանչիւրը շարաթ 30-40 Փրանքի գործ կընէր էջնանանին, որովհետեւ այն արհեստին մէջ որ էջնանանը որբերը կ'աշխատէր կրկու տարի աշխատող աշակերտը 30-40 Փր. շարաթակաւ կ'առնէ, ա'րդ, էջնանան կ'աշխատեցնէ 5 տղայ որոնց իւրտարանիւր իրեն կընէ 40 Փրանքի գործ, շարաթը 5-ը 200 Փրանքի շարաթը, ամիւր՝ ուրիշի՝ 800 Փրանքի գործ, բայց էջնանանը 41 որբերուն կը ծախսէ 450-500 Փր. և այն ալ այդքալու էջնանանի ձեռքէն անցնելով Մանուկի ձեռք, Մանուկի ձեռքէն Մոզեանի ձեռք և Մոզեանի ձեռքէն էլ մասեանի ձեռք, (խեղճ 500 Փրանքը յոյ թղթիկ, մինչեւ որբերուն հասնիս, որքան կ'ընուած պիտի ըլլաս և քանի որ այսպէս է խոստարուհին շատ ճիշտ կ'ըսէ, ինչու միս և հոտած հաւկիթ անգամ կ'անտուաւոր չիս կըրնար հայթայթել որբերուն ամիս մը) զեռ այս չէ, էջնանանի քով աշխատողը ստիպուած է մինչեւ մահը էջնանանի քով աշխատել, որովհետեւ ուրիշ գործարաններու գոները փակ պիտի գտնայ իր առջև և էջնանանի փախ վճարել անոր իր ուղած գնով, Այսպէս որբերու աշխատանքը երկարատեւուած համար շահագործել ապահոված էջնանանը կը շահագործէ և իր բարեբարի անուշը, Մանուկեանին ու Փրանսացիներուն կը ներկայանայ իբր 41 որբ խնամող բարեբար և իր նախը կը չեցնէ 55 միլիոն կարգուրթիւնը անբաւական համարելով (ինչպէս Փրանսացոց մէջ տարածած է թէ Մանուկեանի և կնիկային! ինքն է շինած (,°,°,°)»:

«Էջնանանը որբերու խնդրէն գուրս կը ամիրայութեամբ շատ ապօրինի

ՔԱՆՏՈՒՄԸ Է ՍԵՆՈՆԸ

—)o(—
(Շատ անխորդ քիւնէն եւ վերջ)

Նոր էր միջինը, ստողերը հետզհետէ աւելի ու աւելի խտանում էին երկնային կապուտակի տարածութեան մէջ: Բայց ահա արեւելեան կողմից, հորիզոնում երեւցաւ լուսնի վերին մասը, կամաց-կամաց նրա առջեւ փոռած ստողերը աղօտացան և հորիզոնի թեքումից դուրս գալով, անկից լողալով զիպի վեր փառաւոր իտուսները, Գիւրից դուրս ընկած պայծառները մէկուս, ծառերի տակ, փանաչ խոտերի վրայ պարկուտել էին մի քանի սղաւմարդիկ, Երբորդ օրն էր, որ նրանք փակուած էին այդ այգում: Այդ օրերը իշխանութիւնը փայտածնեւորին էր որոնում, բոլոր հայաբնակ գիւղերը տակն ու վրայ էին տնում, վայ էր այն գիւղին, որի մէջ կը բռնուէր մի փայտած, կը գտնուէր մի զէնք: Վայ էր այն փայտածին, որ կընկնէր իշխանութեան ձեռքը: Այ-

գում ապաստանածները օտարներ էին այդ գիւղում և փայտածներ, ոչ տուէ ունէին, ոչ ընտանիք. Երբ սկսուեց հայաբնակը և երբ նրանց ընկերներին մի քանիսը ձերբակալուեցին, նրանք փակեցին իրանց որհետատնոցները. թողեցին զիւրը և պահուեցին այգիներում, նրանց մէջ էր և զիւրի վարժապետը. նա էլ օտար էր իր միւս ընկեր-պաշտօնակցի նման, որին մի քանի օր առաջ, վաղ առաւօտեան, դու անկողնի մէջ բռնեցին և տարան: Նրանց անմիջապէս հաղորդել էին այդ օրը զիւր թերուած անտանով զիւրի մասին. զեռ մասի չէր ընկել, երբ հաւաքուեցին և պառկեցին խոտերի վրայ. ոչ մէկը մի խօսք չէր արտասանել, ամէնքը լուռ էին, Լուսնի ճառագայթները զած սողացին ծառերի սաղարթները և համարտ լուսաւոր յեցին նրանց մտախոնջ դէմքերը: Լոյսը զգաստօցրեց նրանց, ամէնքն էլ շարժեցին. մի քանիսը նստեցին, մէկը կանգնեց. քիչ առաջ գնաց և նայեց լուսնի կողմը.

—Գնանք աղիքը, աւելորդ է աւելի սպասել:

Վեր կացան բոլորը և յամրաքայլ զիմեցին այգու մի կողմը:

Քիչ անցած ուսնիներին երկար շարքի տակ, նեղ, իտալացի տրանստի նմանող ճանապարհի վրայ, շարքով, միմեանց յետեւից քայլում էին փայտածները. նրանք հագել էին կանանց աէրաններ և գլուխները փաթակել կապտագույն լաչակներով: Լուռ ու մուշ զայլերով երկար ու նեղ ճանապարհը, նրանք դուրսեկան ուսնիներին շարքից և մտան գիւղ. շտապով անցան ոլորտապտոյտ, նեղ ճողոցներով և կանգ առան կեղեցիցու դրան առաջ: Ժամհարք բացեց գուռը, վառեց մի մամ և նրանց առաջնորդեց պատի տակ դրուած նաչի մօտ: Շտապով յետ քաշեցին ծածկոցը և բոլորը միանգամից կռանալով, սկսեցին դիտել զիւրի գէմը. առաջին սյանին գէմը բոլորին էլ անձնաթ թուաց. մասի լոյսը աւելի եւս մտնեցին և ուշադրութեամբ զննում էին:

—Շիթեան, գուցե յանկարծ վարժապետը, չոքեց նաչի առաջ և գէմը

թը ձեռներով ծածկեց:

—Շիթեան, մեր ամենալուռ ընկերը, անբաղք երիտասարդ, ինչպիսի մահ ստացար. ո՞վ խեղդատակ ճակատագիր, ձայնեց նրանց միջից մի ուրիշը և արտասուեց:

Ընկերները նրան յանդիմանեցին իր թուլ շարտութեան համար: Միտքածներին անձանով էր այդ անուշը. նրանք կանգնել և նայում էին վարժապետի վրայ. որը հայեացքը անյապօրէն սեւեռել էր մեռած ընկերով զէմքին:

—Ասեցէք ընկերներ, սաաց նա յանկարծ, հայեացքը դարձնելով, մենք կորցրինք մեր ամենաեռանդուուն, ուստայ և պրոմուտեայ ընկերներից մէկին: Շիթեանին ես հանգիպեցի վերջին անգամ երկու տարի առաջ, երբ մեկուս էր Բուլղարիա, այնտեղից պէտք է վերադառնար և Պարսկաստան վրայով անցնէր մեր հայրենիքը. նա անձնաթ էր այս երկրին. անուշը վերադարձել և այս կակածոտ օրերին զո՞ն է գնացել իր անհորձութեանը...

—Ախր ո՞ւր երիտասարդ...

—Ախր ո՞ւր երիտասարդ...

ընթացքներու մէջ գտնուած է թէ հայ ազգային սանձանագրութեան առջեւ եւ թէ լուսաւորչական կրօնքին հանդէպ, այնոր որ յարմար դատենք յարեալ Փարիզի գաղութը, այնոր որ յետին հայը կրնայ քուէ տալ թաղական խորհուրդը ընտրելու...

նուն հռչակել եւ գործնականապէս ոչինչ ընել: Ժողովուրդ մը ոչխարներու հօտի մը սեղ գնել ըսել է, բայց մարդկային անբոխս: Իր ոչխարներու հօտ մը չի, անոր այնպիսի, անոր կատարելը սնանոր է եւ վտանգաւոր եւ վայ անոնց որոնք ամբողջ արգար զայրոյթով կը մատենն ինքզինքնին...

Հրայր

ՏՕՊԻՐՉՅԻ ԵՆԹԱԿԱՅԻՆ

«Իրաւունք» փախաթ մէջ ձեր խնդաթիւրուած պատասխանը կարդացի. կարծեմ բարոյական ապտակ մը ստանալու համար առանց ձեռքերնիդ խղճերնուդ վրայ դնելու: Տրապարակ նետուեցաք պաշտօնունելու անմեան զոյգերը, հայհոյիչը, ու Ֆալճի քահանան, աւելի ճիշտ, զիս բատիպեցիք որ անցեալ թղթակցութեամբ, որով անպատշաճ երեւոյթներու վրայէն մի քիչ փակ անցած էի հիմալ լաւ մը մեղքացնելով ձեզմ հասարակութեան գոտաւտանը այդ զոյգ ոգորմնիւններու ազգապիտան ընթացքը:

Պարոն, սխալ է երբ ձեր պաշտպանած Յ. Գոգոյը ամոնոյս սկիզբները հրապարական գիտնտան մը մէջ, թելագրուած Ֆալճի քահանայէն ու մի քանի ուխտեալ նենգամիտներէ կըստի նախ պ. Չարքի ու ապա Հ. Յ. Գոգոյից յոյժներ ընելու: Եւ զուր առանց կարմրելու ստիպած էք զիս որ այդ հայհոյանքները մի առ մի նշանակեմ. կարծեմ պէտք չի կայ մի առ մի գրել քանի որ տեղգ կենդանի տասնեակ վէպչներ կան այս քանիս. միթէ հայհոյել կը նշանակէ քննադատել այդպէս ըմբռնած էք զուր: Ա.

թէ այդպէս հասկացեր է ձեր բարի կամեցողութիւնը ուրեմն թող զիտնայ որ շարաշար կը սըխալի. չը կարծէք որ Հ. Յ. Գոգոյի նախնայութիւնը քննադատութենէ կը խորշի. ոչ նա պատրաստ է ամէն ժամանակ պատշաճաւ որ քննադատութեանց պէտք եղած բացատրութիւնը տալ. բայց միեւնոյն ատեն նաեւ քննադատութեան ձեւը տակ հայհոյողներու ալ արժանաւոր բարոյական դաս մը:

Իսկ ձեր ակնարկութեանց որ իբր թէ ես թունդ գաշնակցական մըն եմ, շատ կը սխալիք. որովհետեւ ես ոչ թէ կուսակցամուլ մըն եմ, ինչպէս է ձեր գմեծապատուութիւնը. որ միշտ ստունուող ըսելով կը պնդէք ու բարձր գոտակարգին ալ ձեր հայհոյիչ պաշտպանեալի հետ այնպէս մը կը հաւատացնէք որ իրեն թէ (տիկին նազարբէկ 15000 հարկ, զուր անցած կը գտնուի եղբոր այժմ կիլիկիայ): Ես պարզ համակիր մը Հ. Յ. Գոգոյի նախնայութեան որ անցնելով մի քանի կուսակցական ֆազերէ աւմանուիրական ու ընտրելին գրտած եմ զոյն ու խղճի պարտք կը սեպեմ յայտարարել ըլլոր անկեղծ հայրենասէր հայերուն որ իրենց նախնական ու բարոյական աջակցութիւնը չը խնայեն այդ փրկարար կազմակերպութեան:

Գալով ձեր, անբացու առ քահանայական քանտիտա յորջորջուին, ոչինչ չեմ կարող ըսել, քանզի ինչ գիտէք զինչ գործէք պարոն միթէ այդ յորջորջումը զիս անուանարկել կուզէք: Կըցաւմ ձեր իմաստակ մը լինելուն վասնզի ես ոչ տիրացու եղած եմ եւ ոչ ալ քահանայական քանտիտա եւ ոչ ալ հիմնալի Տօպրիչի քահանայ ձեռնադրուելու փափա-

փազող, ուստի ուրիշ աւթիւ երբ գրիչը ձեռք առնէք, լաւ մը ձեռնօթացէք գիւմարիներու ու այնպէս հրապարակ ելէք, ճանչցցէք զիս պարոն, ես ձեր կարած քահանայացուն չեմ. այլ մի հայ անարգարութեան, անիրաւութեան գէմ բողոքող, ուստի ուր որ ալ լինիմ, ուր որ ալ երթամ ճշմարտութեան գէմ գործողները լոյսի գէմ խաւար սփռողները ձայնիլու պատրաստ եմ բարոյապէս: Ձեր յարգելի հայհոյիչի լիբը խօսքերը ոչ թէ միայն մի քանի պաշտակցականներու էին այլ հայութեան այն ստուար դասակարգին, որ համակիր օժանդակող է Հ. Յ. Գոգոյի նախնայութեան, գիտցած լինիք Պ. Տօպրիչի որ այդ հայութեան ստուար դասակարգը երբէք չը ներքեր պիտըրենաներու որ անլուր հայհոյանքներ տեղացնեն հայութեան յուսատու կազմակերպութեան մը:

Հապա ձեր ոգորմնի թահանան որը սրբացնել յանդգնած էիք, մի քանի անձանց ներկայութեան խօստովանած է իր Ֆալճիութիւնը առանց հեռատես լինելու թէ որ մը հրապարակ կելնէ, քանի որ քահանայական կոչման անարժան արարք մ'է. այդ ինք իր սրբայեալ բերանով խօստովանած թէ ի շնորհս Ֆալճիութեան կովկասի մէջ, անպաշտօն եղած ժամանակը մուծիկներէն 220 հատիկ ոսկի աւելցուցած է, անշուշտ չէ մոռցած ալ ի կովկասի առատաձեւուն մուծիկները ըսելը. Իսկ Պալ, չըքի ու տեղիդ մէջ պատկներու առթիւ ըրած ու խօսած քահանայական կոչման անարժան արարքները մէկգի թող մնայ:

Ուրեմն յարգելի Պ. Տօպրիչի թէ հրապարակին ճանչցնել կուզէք ինքզինքնիդ, նախ լաւ մը սորվեցէք պատերնիդ ու ապա

—Մի այնպիսի հզուուագիւտ, կըրակոտ գործիչ եւ այդպիսի մահ այդ երբէք չի սաղուծ նրան. գոնէ իրան վայել մի մահով մեռնէր, ասաց վարժագետը, կուսու համրութեց ընկերոջ ցուրտ ճակատը. գրուելը զից նրա կրծքի վրայ եւ սկսեց հեկեկալ: Երան բարձրացրին, ամէն էլ համրութեցին մեռածի ճակատը եւ դուրս եկան ճկեղիցոց:

Նոյն ճանապարհով, որով եկել էին, արագարագ հեռացան նրանք եւ մտան ուսնիններ շարքը: Մի քիչ տեղ անցան, քայլերը հանդարտեցրին եւ հանեցին տէրիաները ու լայկները, Ամէնքը տխուր էին, ամէնքն ձնուծ էր միեւնոյն ճակատագրային դառն զգացումը: Այդպիսի բոպէներին նրանք առհասարակ իրանց սփոխանքը գտնուծ էին երգեցողութեան մէջ. ամէնքն էլ երգել գիտէին. լաւ երգում էր մանաւանդ վարժագետը: Միտները գիւմեցին նրանք:

—Վարժագետ, երգիր մի բան: Նա առանց մի բառ արտասանելու, սկսեց երգել: Եղբարիպի մօր երգը:

այն երգը, որը յաճախ երգում էին նրանք: Երգի տխուր եղանակը եւ աւելի եւս տխուր բովանդակութիւնը յուզեց ամենքին. նրանք յիշելին իրենց թողած տունը, ընտանիքը, մայրը... Վարժագետը երգում էր աւելի ու աւելի զգացուելով, նրա ձայնը հետզհետէ դառնում էր արտասուախառն...

Սրգեակ, որդեակ, թէ գաս բարով, ձիերով, Մէրիկ կանչես, տանձ մեռաւ կաբոտովը, Աստուած սիրես, իմ գերեզման չը մոռնաս, Մի ջուխտ արցունք չոր հողերուս ընծայես...

Երգը վիճացաւ. վարժագետը լրանց եւ նրա տխուր հայեացքը հանդիպեց լուսնին: Միտները՝ ըլլորն էլ լուսն գտնուում էին երգի տխուր տրպարութեան ներքոյ: Նրանք ընթանում էին շատ դանդաղ. երգի թողած սպաւորութիւնը հեռզհետէ անցնում էր եւ երկրի վրայ կատարուող ոճիւնների յուշերը չափազանց դառնացնում էին նրանց սրտերը բը-

նութեան այնքան զեղեցիկ ու գրաւիչ խաղաղութեան մէջ, կամաց-կամաց նրանց հոգիներում տիրութիւնը եւ փափուկ զգացմունքները տեղի էին տալիս զայրոյթին եւ ուրիշ եռացող կրքերի. որոնք փոթորկայեղ ծովի այլքների նման փրփուրում եւ ուժգնութեամբ դուրս են թափուում արկերից... Նրանց հոգին փոթորկուում էր... մի վայրիեան կոնք առան, նայեցին լուսնին, շափեցին աստղազուրկ երկնակամարը. շուտ եկան եւ յանկարծ դաշտօրայքի գիշերուայ մեռելային լուսնին իր զուր նրանց կողորդներից դուրս պոթկող ցասկոտ եւ խաղտ ձայներից. նրանք միաձայն երգում էին արձակելով կատարի հոնդիւններ եւ բոց հայեացքները անորչ ասարածութեան մէջ թափառելով...

Մեր արցունքից գետ գոյացաւ, Չորիկ լցաւ, Մեր ցաւերից սրեն բարձրացաւ երկինք հասաւ, Մեր արիւնը ծովին խառնուեց, Կարմիր ներկեց, Մեր դիերը շատ դիզուեցին:

Լեռ կազմեցին: Դո՛վեր, Դո՛վեր ազնկտուր Մեր սեւ վիճակն են ողբում: Մեր հասաչի ձայնը հնչեց: Ախարս բռնեց, Մեր ազգստանքն օգուծ ցնդեց, Մեր ազգական ամպրոպ դարձաւ, Ուժգին ձայնեց, Անսիրտ երկիրն ականջ չուէէր— Մարդ չլսեց... Դիզուէք դիեր լաւէք մայրեր —Աչխարս պատեն ծով ու լեռներ, Ողբ, ազգակ ինչք հասաչ— Երկրում չմնայ սիրտ եւ ականջ... Երգի, ցասումի այդ անպուսկ հեղեղ հնչեց, բարձրացաւ վերեւ, տարածուեց եւ նրա վերջին հնչիւնները բեկբեկուեցին մոտակայ այս գիւնների ճառատաններում...

Հուլիոն 1904 Յունուար Թիֆլիս

մէջտեղ ելէք խեղճիւրեւերը և հայհոյելը քննադատութեան վերածելու, և կամ բոլորովին լռեցէք ու այս բարոյական պայտակն ալ ձեզի թող լաւ դաս մը լինի ձեռն

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

—)o(—

1904 Հոկտ. 23 Նոյի Բարից

Յարգելի...

Սիրելի հայրենակից,

Թող ինձ ձեռքերս գրիչ շարժելու և միտքս շփոթ չեմ գիտեր արդեօք պիտի կրնամ ձեզ հասկացնել այս առուր առաւոտեան պատահարը. Գնչուհի զարմին ինձ հետ ծեծուիլը ահա ինչպէս ես քիչ տկար էի, եկեղեցի չէ կրցի երթալ, տունը մնացի. նշարանում նստած կարգում էի, յանկարծ գողի նման ներս մըտնում էին երկու հոգի, մէկը մեր խոհարարը որը այս առաւոտ մեր ընկերներէն մին նրա հետ վրեժով գործերը ձգել էր, ու իր շորերը առած գնացել է. կուգար իսկ միւս մեր Գնչուհի զարմ, զգուցիլ արարած Մողեանը բարկացաւ, դէ՞քը խառնած սկսաւ ինձ վրայ կանչել, խօսել. որն է է ինչ ամէն օր քեզ վրայ բողբոկայ, լիբը սրկայ ինչու ես աղտոտում յատակները — ինչ կըսես, չեմ հասկնար այդպէս բան չկայ, սուտ է, անամթի խօսքերին կը հաւատար, հարցրեր է՞ք իմ ընկերներին, ես այդ չեմ գիտեր, դու դուրս պիտի երթաս շուտ հազուէ, ու սկսաւ իմ անկողինս հաւաքել, իսկ ես առանց կարելորութիւն տալու նստեցայ կարգալս շարունակելու: Այն ատեն ան յարձակեցաւ ինձ վրայ խփելու և դուրս զրկելու. կռիւ և ազդակ սկսաւ, խոհարարը ինձ բռնած էր խփում էր մէկ ինք մէկինս. հարեաններ լեցուել էին, բայց ես յաղթուած նրա մի բըռունքէն որը խփել էր թոյլ կողքիս մարել էի և բերանս, շորերս արեւնով շաղախուիլ, անկողնոյ վրայ ինկած: Հարեանները ջուր էին ինձ վրայ ամում: Այն ատեն շը կըցի սրտովս խփել նրան որովհետեւ ամէն կողմէ բռնուած էի: Անկողին էի մինչեւ կէսօրէն յետ ժամը 3ը, հազիւ ուժերս ու խելքս վրաս է, բայց չեմ կրնար լաւ գրիլ շտապաբար կը գրեմ ու կը զրկեմ անբաղանջ արցունքը, արցունք արիւնտ և բողբոկէպի անխրոզ ճութիւն և պաշտպան... ինչ է սա միթէ ժամը այս տունը քաղուկ դառնալու ծառաներուն, չէ մեզի ապագայ տեղի մը, մի՞նչ երբ հրէջային պիտի խղան իրենց խղերը, բու չէր անբաղաթութիւններու պատճառ դառնան

նան այժմ սկսած ծեծ, արիւն հոսեցնել կատարեալ Թրքատան, անգուլի և բարբարոս լինն տակ: Արդեօք որբը պաշտպան ունի այս սեւ երկրագնդին վրայ, ունի՞ միթէ արական և յուսույի ժամեր չէ լին միայն նրան վիճակուած է վիշտ, գերի, շարքաշուծիւն մինչեւ օրհասը: Աւարտ չը պիտի լինենք և չպիտի ունենանք կարմիր արեւ, ծառայի ծառայ, ստրուկ և օտք համբուրելն է որբին վիճակը:

Ընկերներս այս այն կողմ վազեցին մարդ չեն կրցեր գտեր բողբոկու, և ո՞վ է լսող... ()

Մնամ քու հայրենակիցդ

Ա. Բ.

Մ. Խ. Սա Էքնայեանի որբերից մէկի նամակն է ուղղված իր հայրենակցին որ Պարիզում է սպրուս:

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԷՆ

—)o(—

Բարից. — Հրանտ. — Ուղարկեցէք ձեր մէկ պատկերը ժամանակին արդէն տպւած է. եթէ միւսներն էլ յարմար լինեն կը տպւեն:

Շուշու. — Պ. Զ. Պ. — Ձեր յիշած անձը Շարժում չէ ստանում:

Գարսովս. — Յ. Էղեայեան. — Շարժումի բաժնեկրին կանխիկ է, այդ պատճառաւ չի դրկուիր:

Ճորճովս. — Մ. Յակ. — Վերի պատասխանը կարդացէք:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ազգային ժողովը բացուեցաւ զահական ճառով. երեսփոխանական ժողովի նախորդ նախագահ սօք. Սթալթովի փոխարէն, որ այժմ արգարագատութեան նախարար է, նախագահ ընտրուեցաւ սօք. Գատէվ, որը կըսեն թէ ամէն շրջանակներու մէջ համակրութիւն կը վայելէ:

— Կրթական նախարարը շրջանական վերատեսուչներու համար վարչական թելադրանքներ պատրաստելով բոլոր վերատեսուչներու ցրուած է, որպէսզի անոնք լաւ գիտակցին իրենց պաշտօնավարութիւնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Մակեդոնիոյ մէջ կացութիւնը համեմատաբար խաղաղ է: Կանքանի մը հատ պուլկարական և յունական հրոսախմբեր որոնք թուրքերու հետ չեն կռուիր, այլ զիրար կը զարնեն:

— Արդէն Պոլիս հասած են Մակեդոնիոյ համար նշանակուած նոր ուսուցիչներ, թեով երեք հոգի, և պիտի մեկնին Սելուսիք:

— Թուրք կառավարութիւնը Խալիքի փախտականներուն վերագարձի համար գեռ պատասխան չէ տուած:

ՌՈՒՍՈՒ

Ն. Պ. Բ. Կ թերթին Բեթերսպուրկէն կը հեռագրեն թէ նոյեմբերի մէջ տեղի պիտի ունենայ զեմաստօններու ներկայացուցիչներէն ժողով մը. բոլոր նահանգներէն պատգամաւորներ պիտի գան. ժողովին նախագահը պիտի ըլլայ Մոսկովայի զեմաստօնի Երեմի նախագահ Շիրով, որու հաստատութեան արդիւրը եղած էր Պէլէվէ:

Նյու Նշանաւոր համագումարու մին մէջ ձեռնուիլք խնդիրներուն ծրագիրը գեռ. յայտնէ չէ:

— Պոլսոյ մէջ լուր տարածուած է որ Ռուսիոյ Սեւ ծովեան նաւատորմից կը պատրաստուի Տարտանսիլը անցնիլ երթալու Բալթիկեան նաւատորմիդին հետ միանալու համար:

— Պեղոյէ վերմիա թերթը կ'անհանգստանայ որ Անգլիական նաւերը կը հետեւին Բալթիկեան նաւատորմիդին. կը վախնայ որ կրկնուի 1900ի միջպէպը երբ ռուս ամիրալը պարտաօրուեր էր սպառնալ անգլիական զբաղաւորի մը:

— Նպաստելու ռուսական նոր փոխառութեան մը կնքումը. 500 միլիոն ռուպլի գումարով Պերլինի և Բարիզի մէջ:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Պէթերբուրգի գործախալութիւնը Ձիֆուէն կիմանայ թէ ճարոնացիները կը կարծեն որ Բորթ-Արթուրը գեռ ամիս մըն ալ կրնայ գիմանալ:

— Բարիզի մէջ կիմանան թէ Յարը չի ուզեր որ ռուսական նաւատորմից Անգլիոյ հաճոյքին համար նաւատարութիւն, այդ պատճառով ալ Բոժտեստվենքիին վիսամիրալութիւն տուած է:

— Գերմանական թերթ մը կը հաղորդէ որ ճարոնական պաշտօնական ցուցակի մը համաձայն ճարոնացիներուն կորուստը Շախոյի քով 15389 հոգի կը հասնի:

— Բեթերսպուրկէն կը հաղորդեն որ Թուրք ընդհարման ամթիւ կազմուած յանձնախմբի անդամները են Անգլիական, Ռուսական, Ֆրանսական և Ամերիկեան մէկ մէկ ծովակալներ. նախագահ պիտի ըլլայ չէզօք ամիրալներէն մին:

— Ռուս հեռագրական գործակալութիւնը Մոսկուէնէն կիմանայ որ նախազիկ երորդարէն օժուցօ

զօրաբաժիններ պիտի ղօրացնեն Օյսմայի բանակը:

Նախազակի ցամաք իջած են երկու զօրաբաժիններ Բորթ-Արթուրի համար:

— Ըստ «Տէյլի Նիւս» թերթի վիկօ մնացած չորս ուսուցիչները Բեթերսպուրկ վերագարձեր են:

— Ըստ «Տէյլը Քրօնք» թերթի անգլիացի ամիրալ Աւարկէր կը հետեւի ռուսական նաւատորմիդին առանց իր կրակները ցոյց տալու:

— Պալմայէն կը յաղորդեն որ անգլիական երկու զբաղաւորները, որ նոր խարխիս ձգած էին, գաղտնի հրաման ստացած են մեկնելու և մեծ հապճեպով մէկ թօրփիլանաւով և չորս թօրփիլներ ջնջողներով մեկնեցան Ջիբրալտար:

— Ճարոնական նոր փոխառութիւնը ստորագրուած է ամբողջովին Լոնտոնի մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԷՂԸ

—)o(—

Դնորհակալութեամբ ընդունեցինք Հայ Ուսանողական Միութեան հրատարակած Հայաստանի Քարտէզը, շքեղ կազմով:

Քարտէզի գիծն է մէկ ֆրանկ Ռուսաստանում կէտ բուպլի, Ամեն հայ պարտաւոր է ունենալ այս սիրուն և աման ու բաւական խրեմքով պատրաստուած քարտէզը:

Հասցէ՝
Իւնիօն Տէ Էսթեսեան Արեւելիկ
S'horovay
Քիւ ղը լեմօյ զը Շիմի
ԺԼՆԷԼ

ԲԱՍՏԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Տարին վերջանալու մօտ է և մեր բաժանորդներէն շատերը դեռ իրենց բաժնեկրները չեն վճարած:

Կան և այնպիսիները որոնք երկու տարեկան պարտք ունին, ինչպէս կերելի այդ մարդիկը կը կարծեն թէ մենք թուղթ տէմբը ձրի կառնենք, գրաշարները ու տպարաններն ալ ձրի կաշխատին և մենք հաց չենք ուտեր, այլ օղով կապրինք:

Քիչ մը ազնիւ ըլլալու են մեր ջլվճարող բաժանորդները, մանաւանդ անոր համար որ մենք երբէք առանց բաժանորդներու պահանջին թերթ չենք զրկեր մարդու: Պահանջողը և իր պարտականութիւնը կատարելու տարրական զգացումէն զուրկ չը պիտի ըլլայ:

Խնդրագրութիւն

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ

Печатница «Взаимность» Варна